# ՈՒՂԵՐՁ ԱՌ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ստացված է Լիբանանի հայկական կիրակնօրյա դպրոցների վարիչ Տ. Բաբկեն վարդապետ Վարժապետյանի հետևյալ գրությունը․

«Ամենապատիւ Տէր Գէորգ Սրբ. արքեպիսկոպոս Չէօրէքճեան, Ազգընտիր Տեղ. Ամեն. Հայոց Մայր Աթոռոյ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ամեն. Սրբազան Հայր,

Ամենուս պաշտելի և փարելի Մայր Ս. Աթոռոյ ուխտը, և մանաւանդ—ԷՋՄԻԱԾԻՆ,—Հոգևոր Ամսօրեայի մեզ հասնիլը մղիչ ուժ եղան ինձ որ՝ իմ սրտաբուխ զգացումներս յայտնեմ Ձեր Բարձր Սրբազնութեան այս առթիւ:

Մեր Հոգևոր Հօր Գեր. Տ. Խադ Սրբազանի Ձեր անձի մասին ունեցած տպաւորութիւնը ինձ մեծ համարձակութիւն կը ներշնչէ իբր որդի մօտենալ Ձեր Բարձր Հայրութեան. փառքի Տ. Խադ Սրբ. Հայրը զՁեզ մօտէն ճանաչելու բախտաւորութիւնը ունենալով, յայտնեց, թէ ինչպիսի Հայրական և սիրալիր, խոնարհ և բարեացակամ հոգի մըն է, որ կբնակի Ձեր Սրբութեան անձին մէջ:

Մայր Աթոռոյ Ամսօրեայի երեւման առթիւ կուղարկեմ ՈՒՂԵՐՁ մը Կիլիկեան Թեմերու Հայ մանկանց կողմէ, որոնք մեր կրօնական ու դաս հոգևոր Դպրոցներուն կաշակերտին: Մեր առօրեական վարժարաններուն մօտ ունինք նաև բազմաթիւ դպրոցներ. և այս Ձեռնարկը Կիլիկիոյ Կաթողիկոսարանի հսկողութեամբ, մեր անարժանութիւնը Ընդհ. Տեսուչ կարգուած է այն շատ պատասխանատու գործին: Թիսխ խնդրեմ որ օրհնէիք մեզ, մեր անձերն ու դպրոցները և այս գործը Ձեր աղօթքներուն մէջ յիշելով գնանք: Մնալով ի համբոյր Ձեր Սրբութեան Ս. Աջոյն

Մնամ որդիական խոր յարգանօք, Հաւատարիմ ծառայ
Մեր պաշտելի Մայր Աթոռոյ և Ձեր Բարձր Սրբազնութեան
Բաբկէն Վարդապետ Վարժապետեան»:

## «Ուղերձ Հոգեւոր Ամսագրի ի լոյս ընծայման առթիւ[1]

*«Հայ ժողովուրդը հիմնուել է Ս. Լու-*
*սաւորչի Աջի վրայ»:*

*(Ա. Դաւթեան)*

Աշխարհի երեսին ամենաքաղցր, խանդավառիչ լուրերը Մայր Հայրենիքէն հասած լուրերն են մեզ պանդուխտ Հայ պատանիներուս համար: Ներկայ Հայրենական մեծ պատերազմի ընթացքին ոգևորեցին մեզ մեր Հայ հերոսներու սխրագործութիւնները: Մեր օրերուն մենք կրցինք տեսնել նոր դարերուն վերապրող Մամիկոնեաններ, Բագրատունիներ, Կամսարականներ և մեր բոլոր հին հերոսները, Կարմիր Բանակի շարքին հերոսութիւններ կատարող Հ. Բաղրամեաններու, Ա. Ղազարեաններու, Ն. Ստեփանեաններու և հազարաւոր մեր այլ հերոս մարտիկներու անձին մէջ: Իրենց հանդէպ մեր ունեցած սքանչացումը մեզ իրենց նմանելու կը մղէ: Իսկ երբ Հայոց Ս. Եկեղեցւոյ հաւատացեալ ազայք, մենք կը նկատենք Էջմիածին ամսագրի մեզ հասնիլը ամենաթանկագին նուէր, զոր երբէք կարենար ընծայել Մայր Աթոռը իր պանդուխտ զաւակներուն, մանաւանդ մեզի, որ կապրինք օտար աստղերու տակ Հայրենիքէ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէ կտրուած:

Ինչպէս որ մեր Ե. դարու թարգմանիչներու խումբերը մի ոսկէ դար ստեղծեցին, Տիրոջ կամքը Հայ ժողովրդին թարգմանելով, մենք կը հաւատանք որ մի այլ ոսկեդար ևս մեր առջև ունինք, և այդ պիտի կերտուի Մայր Աթոռէն ու Հայրենիքէն կատարուած ճառագայթումներով, այսինքն հոգևոր դրականութեամբ, մշակոյթով և Հայրենասիրութեան մշակումով:

Պանդուխտի անապատային մեր կեանքի մէջ ԷՋՄԻԱԾԻՆ ամսագիրը մի ովասիս պիտի ըլլայ մեզ համար, որու շնորհիւ մխիթարուինք, մինչև այն օրը, երբ լսենք Ս. Էջմիածնէն ու մեր սքանչելի Հայրենիքէն մեզ հասնող կոչը. «Եկայք, որդեակք իմ, Ձեր մօրն այցելութեան»: Մինչև այդ մեծ օրը մենք Ս. Էջմիածնով պիտի խանդավառուինք, զայն պիտի երազենք և անոր ուսմունքներով պիտի ապրենք, վասնզի նա մեր Ս. հայրերու մեծ հաւատքին պարիսպն ու բերդն է, վասնզի նա հիմնուած է Ս. Լուսաւորչի Հաւատքով ու իր վրայ. «Հայ ժողովուրդը հիմնուել է Ս. Լուսաւորչի աջին վրայ»:

Համբոյր քեզ, Ս. Էջմիածին, յարգանք քեզ Մայր Աթոռ և սրբազան Հայրենիք»:

[1] Ներկայ ուղերձը գրուած է Նիկոսիոյ կաթողիկոսութեան Կիրակնօրեայ դպրոցներու հոգևոր վարժարաններու աշակերտութեան կողմէ: